Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
20 սեպտեմբերի 2024 թվականի N 366 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հոկտեմբերի 03–ից

«Shopping» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 03.10.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Mastercard Standard և Mastercard Gold տեսակի քարտեր, որոնք արշավի ընթացքում կկատարեն միջազգային վճարում:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Mastercard տեսակի Քարտի քարտատեր:
1.4 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 03.10.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Mastercard Standard կամ Mastercard Gold տեսակի Քարտերով գնումներ կատարելիս, Քարտապանները կստանան 10% idcoin՝ ստորև նշված կայքերից գնումներ կատարելու դեպքում և 1% idcoin բոլոր* միջազգային վճարային գործարքների համար.

- Amazon
- Aliexpress
- Temu
- Pinduoduo
- Shein

*Ընդ որում, Wildberries և Ozon հարթակները չեն համարվում միջազգային, քանի որ նշված հարթակներով կատարված վճարումներն իրականացվում են ՀՀ բանկերի միջնորդությամբ և ձևակերպվում որպես տեղական գործարքներ: Նույն տրամաբանությունը տարածվում է նաև այլ միջազգային հարթակների վրա, որոնց վճարումները իրականացվում են ՀՀ բանկերի կողմից:

2.2 idcoin-ի ստացման համար մեկ վճարային գործարքի գումարը պետք է կազմի կամ գերազանցի 5 000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

2.3 Արշավի գործողության ընթացքում Idram&IDBank հավելվածի, IDBanking.am, Banking.idram.am հարթակների միջոցով պատվիրված Mastercard Standard և Mastercard Gold տեսակի քարտերը (բոլոր արժույթներով) կսպասարկվեն հետևյալ պայմաններով՝

- Mastercard Standard՝ առաջին տարին առանց սպասարկման վճարի,
- Mastercard Gold՝ առաջին տարին 70% զեղչված սպասարկման վճարով:
- Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմաններն անփոփոխ են՝ համաձայն տեղեկատվական ամփոփագրի:

2.4 Սույն արշավի շրջանակում միևնույն Քարտապանի գծով օրացույցային ամսվա ընթացքում առավելագույն սահմանաչափը 10 000 idcoin է (նախքան հարկումը) ՝ անկախ Քարտերի քանակից: idcoin-ը ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ՝ օրացույցային ամսվան հաջորդող ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը:

2.5 Հետ վերադարձված գնումների դիմաց idcoin չի վճարվում:

2.6 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.7 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/666/noa9o21tx3o9xjdwixalavk3odyu0qj7/IDcoinTC_final.pdf

2.8 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: